ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետի ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ (ծածկագիրը՝ 61-2.2-30)

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

-տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում.

Գործառույթները՝

- ապահովում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի (այսուհետ՝ Մարզ) սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մշակման, ծրագրերի նախագծերի քննարկման համար անհրաժեշտ փաստաթղթերի, զեկուցման նյութերի և համապատասխան որոշման նախագծերի պատրաստման աշխատանքների կատարումը.

- համակարգում է Մարզի սոցիալ-տնտեսական (ըստ ճյուղերի և բնագավառների) զարգացման ռազմավարության և հիմնադրույթների մշակման աշխատանքները.

- ապահովում է Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման համալիր քառամյա ծրագրի նախագծի կազմման աշխատանքները.

-ապահովում է Մարզի համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի վերլուծության, ծրագրերի կատարման ընթացքի և արդյունքների վերլուծության աշխատանքները.

- ապահովում է փոքր և միջին ձեռնարկությունների ոլորտով զբաղվող նախարարությունների, գերատեսչությունների, մարզային կառույցների և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցությունը.

- աջակցում է Մարզի փոքր և միջին ձեռնարկատիրության ծրագրերի առաջնահերթությունների և գերակայությունների որոշման, զարգացման ծրագրերի քննարկման աշխատանքներին, ապահովում է

Մարզի փոքր և միջին ձեռնարկությունների և ձեռնարկատիրական համակարգի աշխատանքների մասին տեղեկատվության ստացման և վերլուծության աշխատանքների կատարումը.

- ապահովում է Մարզում զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության մշակման աշխատանքները.

- ապահովում է Մարզում մարքեթինգային միջոցառումների մշակման աշխատանքները

- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2019թ. ապրիլի 12-ը ներառյալ:

Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերի պատճենները իսկականի հետ միասին.

- դիմում /լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/.

- անձնագիր

-դիպլոմ

- աշխատանքային գրքույկ

- արական սեռի անձինք նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասի կցագրման վկայականի պատճենը.

- մեկ լուսանկար 3x4 սմ. չափսի:

Աշխատավարձը կազմում է 256,623 դրամ (երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր քսաներեք դրամ):

Տվյալ որոշակի ժամկետով թափուր պաշտոնի վերացման ժամկետը՝ հիմքի վերացումը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ կամ փաստաթղթերը ուղարկել անձնակազմի կառավարման բաժնի էլեկտրոնային հասցեով՝ aragatsotn.andznakazm@mta.gov.am

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը 10:00-ից մինչև 13:00-ն,բացի շաբաթ և կիրակի օրերից:

Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 0232-3-53-83